ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) և «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության ինստիտուտ» Հայաստանի ազգային ներկայացուցչությունը (այսուհետ՝ ՀԱՊԿ ինստիտուտ), այսուհետ միասին՝ Կողմեր,

առաջնորդվելով երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցային գիտական ծրագրերի իրականացմանն աջակցելու փոխադարձ ցանկությամբ,

ելնելով հավաքական անվտանգության պահպանման վերաբերյալ տեղեկատվության տարածման անհրաժեշտությունից և հաշվի առնելով ՀԱՊԿ ինստիտուտի՝ հասարակության լայն շերտերի իրազեկմանն ուղղված գիտական և կրթական գործունեության իրականացման առաքելությունը,

գիտակցելով Եվրասիական տարածաշրջանում և ժամանակակից աշխարհում ռազմաքաղաքական հարցերի վերաբերյալ իրականացվող վերլուծությունների և հետազոտությունների կարևորությունը՝ որպես անվտանգության ապահովման և Հայաստանի Հանրապետության և ՀԱՊԿ այլ անդամ երկրների միջև համագործակցության խթանման գործոն,

կնքեցին սույն Մտադրությունների հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) ներքոհիշյալի վերաբերյալ.

Հոդված 1. Հուշագրի առարկան

1.1 Սույն Հուշագրի առարկան Կողմերի միջև գործընկերային հարաբերությունների հաստատումն ու երկարաժամկետ արդյունավետ և փոխշահավետ

համագործակցությունն է՝ ուղղված Կողմերի աջակցությամբ համատեղ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում գիտահետազոտական ծրագրերի իրականացմանը:

1.2. Կողմերը, հիմնվելով ընդհանուր փորձի վրա, նպատակ ունեն համագործակցելու՝ իրավահավասարության, բարի կամքի, հարգանքի և վստահության հիմունքներով:

Հոդված 2. Համագործակցության ուղղությունները

2.1. Սույն Հուշագրի շրջանակներում Կողմերը կհամագործակցեն հետևյալ ուղղություններով.

2.1.1. համատեղ անցկացվող մրցութային ծրագրերի շրջանակներում *շրջակա միջավայրի անվտանգության, ներառյալ՝ բնօգտագործման, գեոէկոլոգիայի* և մի շարք այլ ուղղվածության խնդիրներին նվիրված գիտական ծրագրերի համաֆինանսավորում,

2.1.2. համատեղ աջակցություն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ գիտական և տեղեկատվավերլուծական ծրագրերի մշակման և սեմինարների, գիտաժողովների, կլոր սեղանների, քննարկումների և այլ միջոցառումների անցկացման աշխատանքներին:

Հոդված 3. Համագործակցության ձևերը

3.1. Կողմերը կփոխանակեն համագործակցության ոլորտին առնչվող տեղեկատվություն՝ հաղորդագրությունների, Կողմերի ներկայացուցիչների միջև հանդիպումների կազմակերպման և այլ ընդունված եղանակներով:

3.2. Կողմերը կտրամադրեն խորհրդատվություն՝ իրենց գործունեության և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ:

3.3. Կողմերը կխրախուսեն համատեղ միջոցառումների կազմակերպումը և սույն Հուշագրի նպատակների իրականացման համար համապատասխան ծրագրերի մշակմանն ուղղված աշխատանքները:

Հոդված 4. Համագործակցության կազմակերպումը

4.1. Ի լրումն սույն Հուշագրի՝ Կողմերը կարող են կնքել միջոցառումների կազմակերպման ծրագիր՝ուղղված երկկողմ համագործակցության զարգացմանը, որը, ստորագրվելուց հետո կդառնա սույն Հուշագրի անբաժանելի մասը:

4.2. Կողմերը պարտավորվում են պարբերաբար վերանայել սույն Հուշագրի իրականացման ընթացքը և անհրաժեշտության դեպքում սահմանել փոխշահավետ համագործակցության լրացուցիչ ձևեր և ուղղություններ:

4.3. Սույն Հուշագրի դրույթները, ինչպես նաև վերջինիցս բխող առանձին այլ ծրագրերն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն:

4.4. Սույն Հուշագրի կիրառման և մեկնաբանման ընթացքում ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

Հոդված 5. Տեղեկատվության փոխանակում

5.1. Կողմերը պարտավորվում են գաղտնի պահել մյուս Կողմից ստացված յուրաքանչյուր տեղեկատվություն սույն Հուշագրի և վերջինիս հիման վրա կնքված այլ փաստաթղթերի շրջանակներում:

5.2. Կողմերը պարտավորվում են պահպանել սույն Հուշագրի պայմանների և տեղեկատվության գաղտնիությունը, որը փոխանցվում է որպես գաղտնի տեղեկատվություն կամ որպես տեղեկատվություն, որն իր բնույթով պետք է համարել գաղտնի:

5.3. Կողմերը իրավասու են հրապարակել սույն Հուշագրի կատարման մասին տեղեկատվությունն իրենց պաշտոնական կայքում:

Հոդված 6. Հուշագրի գործողության ժամկետը և դադարեցման կարգը

6.1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է 3 տարի ժամկետով: Գործողության ժամկետը ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ 3 տարի ժամկետով, եթե Կողմերից որևէ մեկը ժամկետի ավարտից առնվազն 3 ամիս առաջ մյուս կողմին գրավոր կերպով չծանուցի սույն Հուշագիրը դադարեցնելու իր մտադրության մասին:

6.2. Յուրաքանչյուր Կողմն իրավասու է միակողմանի կարգով վաղաժամկետ դադարեցնելու սույն Հուշագիրը՝ գրավոր ծանուցելով այդ մասին մյուս Կողմին առնվազն տասը օրացուցային օր առաջ մինչև ենթադրյալ դադարեցման ամսաթիվը:

Հոդված 7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն Հուշագրի տեքստում ցանկացած փոփոխություն համարվում է վավեր, եթե այն կատարված է գրավոր ձևով՝ ստորագրված Կողմերից յուրաքանչյուրի կողմից:

7.2. Կողմերից յուրաքանչուրը պարտավորվում է ծանուցելու մյուս Կողմին անվանման, հասցեի, հեռախոսահամարի, ֆաքսի և հասցեի փոփոխության մասին ոչ ուշ քան տվյալ փոփոխության օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

7.3. Սույն Հուշագիրը կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրված է մեկ օրինակ:

Կատարված է ք. Երևան, 2017թ. մայիսի «16»- ին:

«Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության ինստիտուտ» Հայաստանի ազգային ներկայացուցչություն	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե
Տնօրեն՝	Նախագահ՝
Ն. ԹՈՐՈՍՅԱՆ Կ.S.	Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կ.S.